ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
գործուղման արդյունքների
վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Գայանե Բարսեղյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչություն, ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետ Ժ/պ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   2025թ. հոկտեմբերի 20-ից 24-ը՝ այցելություն Ավստրիայի Հանրապետություն, մայրաքաղաք Վիեննա:

3. **Հրավիրող կողմը.**
   ՅՈՒՆԻՍԵՖ և Համաշխարհային բանկ

4. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Հաշմանդամություն ունեցող անձանց մասով զգայուն սոցիալական պաշտպանության համակարգերի հիմնական դասընթաց»-ին:

5. **Քննարկված թեմաները.**
   Օր 1՝ Հաշմանդամություն ներառող սոցիալական պաշտպանության համակարգերի ձևավորում. ապացույցների, պլանավորման և աջակցության միջոցով հավասարության ապահովում:
   Հաշմանդամություն ներառող սոցիալական պաշտպանությունը կարևոր է անձանց իրավունքների, արժանապատվության և հասարակական մասնակցության համար: Ներառական համակարգերը ճանաչում են հաշմանդամության բազմազան փորձառությունները և վերացնում հավասար հնարավորությունները սահմանափակող խոչընդոտները: Անձնակենտրոն պլանավորումը հնարավորություն է տալիս ձևավորել արդար և արդյունավետ քաղաքականություն՝ հիմնված իրական կարիքների և հաշմանդամության լրացուցիչ ծախսերի վրա: Դրամական և ոչ դրամական աջակցության համադրությունը նպաստում է տնտեսական անվտանգությանը, անկախությանը և սոցիալական ներառմանը:

   Օր 2՝ Հաշմանդամության համապարփակ աջակցության համակարգերի ձևավորում. օժանդակ տեխնոլոգիաների, մարդկային աջակցության ծառայությունների և գնահատման համակարգերի բարեփոխում:
   Հաշմանդամության արդյունավետ աջակցությունը պահանջում է **ինտեգրված, անձնակենտրոն մոտեցում**, որը ժամանակակից աշխարհում ընդգրկում է **օժանդակ տեխնոլոգիաների ծառայություններ, մարդկային աջակցություն և նպատակային կարիքների գնահատում**: Օժանդակ տեխնոլոգիաները պետք է ուղեկցվեն տրամադրվող ծառայություններով՝ գնահատում, տեղավորում, օգտվողի ուսուցում և հետագա վերահսկում՝ ապահովելու համար անվտանգությունը և արդյունավետությունը: **Անձնական աջակցությունը** պետք է լինի օգտվողի կողմից

ուղղորդվող, ճկուն, հիմնված անհատական կարիքների և իրականացվի արժանավայել աշխատանքի չափանիշներով:

Օր 3՝ Արդյունավետ աջակցության համապարփակ մոտեցումներ՝ ֆինանսավորում, աշխատուժ և հսկողություն (ներկայացնող երկրներ՝ Անգլիա, Վիեննա, Բոսնիա):

Հաշմանդամության աջակցության համակարգերի համապարփակ մոտեցման հիմնական բաղադրիչներն են՝

- **Կանոնակարգային մեխանիզմները** սահմանում են, թե ով է իրավասու, ինչպիսի չափորոշիչներ են գործում:
- **Ֆինանսավորումը** ընդգրկում է տարբեր աղբյուրներ և մեխանիզմներ՝ կենտրոնանալով **անձկենտրոն ֆինանսավորման** վրա, որը համապատասխանում է անհատական կարիքներին:
- **Աշխատուժի պլանավորումը** ապահովում է վերապատրաստված մարդկային աջակցությունը՝ խնամակալներից և անձնական օգնականներից մինչև սոցիալական աշխատողներ:
- **Ծառայությունների տեսակները՝** շուրջօրյա հաստատություններից մինչև համայնքային տներ, տնային խնամք, հանգստի ծառայություններ, աջակցվող աշխատանք, անձնական օգնություն, օժանդակ տեխնոլոգիաներ, համայնքային աջակցություն: Նոր մոտեցումները թույլ են տալիս հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվել **աշխատանքի, ընտանեկան կյանքի և ձեռնարկատիրության** մեջ:
- **Որակի վերահսկողությունը** ապահովում է ծառայությունների մատուցման և արդյունքների չափորոշիչների պահպանումը:

Օր 4՝ Սոցիալական պաշտպանությունից մինչև աշխատանքի հնարավորություններ՝ ինտեգրված մոտեցումներ հաշմանդամություն ունեցող անձանց ներառման համար:

Վաղ և շարունակական աջակցությունը կարևոր է հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ իրենց ողջ ներուժը իրացնելու համար: Միջամտությունները պետք է սկսվեն ծննդյան պահից՝ վաղ սկրինինգով, ընտանեկան աջակցությամբ, առողջապահությամբ և վաղ մանկության ծառայություններով: Ներառական կրթության և ուսումնական միջավայրերը, ծնողների ներգրավվածությունը և ծառայությունների հասանելիությունը կարևորագույն նշանակություն ունեն նախադպրոցական և դպրոցական տարիքում: Դեռահասները և երիտասարդները կարիք ունեն անցումային աջակցության, հմտությունների զարգացման, կարիերայի ուղղորդման և անկախ կյանքի հնարավորությունների: Սոցիալական պաշտպանությունը և մասնագիտացված ծրագրերը, ներառյալ քվոտաները և զբաղվածության համար նախատեսված միջոցները, պետք է լինեն ներառական, արդար և արձագանքող՝ հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների և երիտասարդների կարիքներին: Վաղ ներդրումները նվազեցնում են երկարաժամկետ ծախսերը և բարելավում կյանքի արդյունքները:

Օր 5՝ Երկարատև խնամք և աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց համար. հայեցակարգային և իրականացման նմանություններ և տարբերություններ(օրինակ՝ Նիդերլանդների սոցիալական պաշտպանության համակարգ):

Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և աջակցության ծառայությունները պետք է լինեն ճկուն, անհատակենտրոն և մատուցվեն տանը, համայնքում կամ հաստատությունում՝ հիմնված անհատական կարիքի վրա: Առողջապահական, վերականգնողական, օժանդակ տեխնոլոգիաների և ընտանիքի աջակցության վաղ հասանելիությունը բարելավում է կենսագործունեությունը և բարեկեցությունը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումները անցկացվել են դասընթացի ձևաչափով, որի նպատակն էր ներկայացնել տարբեր երկրների հաջողված և գործող մեխանիզմները: Միաժամանակ, արդի մոտեցումները թե ինչպիսին պետք է լինեն համապատասխան ծառայությունները՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Օժանդակ տեխնոլոգիաների աջակցության թեմայի ներկայացման ընթացքում որպես համակարգի թվային փոխակերպման օրինակ ներկայացրել եմ e-disability հարթակը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Դասընթացի ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերի միջև տեղի են ունեցել ոլորտային շփումներ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Դասընթացը կրում էր ուսոցողական բնույթ, որի հիմնական նպատակն էր հետագայում աշխատանքում առաջնորդվել ինտեգրված ծառայությունների տրամադրման նոր մոտեցումներով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

29.10.2025թ